ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն)
2020 թ. փետրվարի 28-ից մարտի 3-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային պատկերասրահ

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Հայկական ոդիսական» հայ մշակույթին, երաժշտությանը և ֆիլմերին նվիրված փառատոնին:

Մասնակցել եմ հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների 100-րդ տարեդարձին նվիրված կինոփառատոնին, որտեղ ներկայացվել են Սերգեյ Փարաջանովի, Համո Բեկնազարյանի և ժամանակակից ռեժիսորների ֆիլմեր:

Այցի շրջանակներում հանդիպել եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանի հետ, քննարկել եմ հայկական կինոժառանգության թվային վերականգնման և տարածման ծրագրի

շրջանակներում ամերիկահայության հնարավոր մասնակցությանն առնչվող հարցը: Նախանշվել են այդ ուղղությամբ արվելիք աշխատանքները:

Հանդիպումներ եմ ունեցել նաև միջազգային հեղինակավոր կառույցների ներկայացուցիչների հետ, քննարկել թվայնացման համար անհրաժեշտ մոտավոր բյուջեն և քայլերի հաջորդականությունը:

Հանդես եմ եկել հայկական կինոժառանգության վերաբերյալ հարցազրույցներով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հայկական կինոժառանգության հանրայնացում, պոտենցիալ աջակիցների վերաբերյալ տեղեկատվության ձևավորում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի դեսպանության հետ փոխհամաձայնեցված ծրագրի իրականացում:

06.03.2020

Արայիկ Խզմալյան